շնորհակալ լինիմք, այսչափ սրտմութեանց, աւարառութեանց, ասեանգութեանց, սրբապղծութեանց, բռնի կրօնափոխութեանց կամ ո՞ր մէկ չարեաց համար. այլ կը կասկածեմք թէ սորա չար հետեւանքը միայն մեր անձի վրայ չկայանայ, այլ ընդհանուր լինի։

Վերջապէս Տարօնոյ աշխարհն ես խիստ վտանգաւոր դրից մէջ է, երկուստեք սուր և հուր կըսպառնայ իրեն, և յարաժամ կը տատանի ընդ մէջ կենաց և մահու։

Ժողովուրդն անհնարին և անհամբեր յուսոյ և յուսոյ կսպասէ և ոչինչ չերեւիր, և եթէ Աստուած մի արասցէ այս խնդիրն շատ երկարի, կամ մինչև գարուն երթայ առանց օգտակար վախճանի մը յանգելու, աներկբայ լինելու եմք թէ Տարօնոյ հոգեհանգիստն ես պիտի կարդացուի ի լրումն հայութեան. . . . . . . .։ Ահա այս է մեր վիճակն ու դրութիւնը, կաղաչեմք, կը պաղատիմք արտասուալից գիմօք, գթացէք այս մնացորդ ամէ ժողովրդեան վրայ և եթէ հնար է, մի խնայէք զայն այրող ու լափող բոցին ու կրակին վրայ կուց մի ջուր սրսկել. Իսկ եթէ հրդեհի առաջքը չառնուի, շատ չանցած Տարօնն ու մնացեալ հատ ու կտորներն ես զոհ պիտի լինին բռնութեան . . . .

1895 դեկտեմբեր 26։
Ի Տարօն–Մուշ։

---

## ՊԱՐՍԿԱՀԱՅՔ․

«Արարատի» աշխատակից պ. Ս. Հայկունին կարգադրուեցաւ վերիլ և տեսուչ ս. Թադէի առաքելոյ վանուց Մակուայ նահանգում և ուղեւորուեցաւ իւր պաշտօնատեղին։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ․

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ Ցանուն Սինօդին ս. Էջմիածնի թ. 1153, որով առաքի ի պահ ի գանձարանի Մայր Աթոռոյ տոմս մի հինգ հազար րուբլոյ 4 % պետական ռենտայի սերիա 162, № 309, զոր նուիրեալ ժառանգք հանգուցեալ Գրիգորի Թումայեան Բագուեցւոյ, վասն պահպանելոյ տոկոսիւք նորա որդեգիր մի ի Հոգեւոր Ճեմարանի ս. Աթոռոյս։

— Օրհնութեան յանուն Աւագ Ցանուտեան Ծղուարդայ գեղջ և չորից աւագանեայ տեղւոյն թ. 1154։

— Ցանուն Սինօդի ս. Էջմիածնի թ. 1160, որով կարգի Տ Ստեփան վարդապետն Շիրակունի վանահայր Անւոյ, ի տեղի Տ. Հմայեակ վարդապետի Տ. Ցարութիւնեան։

— Ցանուն նորին թ. 1161, որով Տ. Յովհաննէս վարդապետն կարգի ի պաշտօն փոխանորդութեան Աղէքսանդրապօլու։

— Հաստատութեան Հոգաբարձութեան դպրոցին ս. Համբարձում եկեղեցւոյ Նոր Նախիջեւանի թ. 1165.

— Օրհնութեան յանուն Գէորգայ Քեանդարեան Աղէքսանդրապօլցւոյ թ. 1192։

— Օրհնութեան յանուն օր. Թուշիկի Ցարախեան, թ. 1238.

— Ցանուն Տ. Մեսրոպ վարդապետի Տ. Մովսիսեան որով հաստատի ի պաշտօն տեսչի Հոգեւոր Դպրանոցին Հայոց Շուշւոյ թ, 1246.

— Ցանուն Տ. Յովհաննէս վարդապետի Շիրակունւոյ, որով կարգի ի պաշտօն փոխանորդութեան վիճակին Հայոց Աղէքսանդրապօլու, թ. 1250.

— Ցանուն Սարգսի Հայկունւոյ, որով կարգի ուսուցիչ Դպրեվանից ս. Թադէի վանից Մակուայ, տեսուչ դպրոցաց Հայոց շրջակայ գիւղօրէից և կառավարիչ կալուածոց վանից. թ. 1272.

— Հաստատութեան հոգաբարձութեան միդասեան դպրոցի ս. Աստուածածին եկեղեցւոյ Թելաւ քաղաքի, թ. 1292.

— Ցանուն Տ. Յովհաննէս քահանայի Սարբեան Խօսրասուբաղարի, որով շնորհի նմա պատիւ Աւագ քահանայութեան, թ. 1293.

— Ցանուն Տ. Ստեփան վարդապետի Շիրակունւոյ, որով կարգի ի պաշտօն վանահայրութեան ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Անւոյ թ. 1310.

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ․


ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

1. ԱՆՄԵՂ Մանապարտը . . . Կ. Վ. . 393
2. Աղօթքի ոյժը . . (Թարգմ.) . Ղ. Ս. . 395
3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . . 400

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

4. Խաչի ներքոյ . . Ց. Ցովհաննիսեան . 405
5. Պարթեւները Պարսկաստանում . Ն. Ք. 406

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

6. Ժողովրդական համալսարաններ . . . . 409
7. Մամիս ընտանալը. Պատկերներ Շիրակի գիւղական կեանքից. Ա. . . . . 410
8. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . . . . 415

ԱԶԳԱՅԻՆ

Հայկական խնդիր . . . . . 417
10. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . 418
Մայր Աթոռ. . . . . . . .
ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . .
Բեսարաբիոյ թեմ. . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . .
ՊԱՐՍԿԱՀԱՅՔ . . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾ.
Ագաթանգեղոսի աղբիւրներից Գ. Տ. Մկրտչեան.
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։